


ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՐԱՐԿԻՐԻ ՀԱՅՈՑ

Է ԳԱՀԻՐԷ

Հիմնեալ 1 Յունվար 1910



ԳԱՀԻՐԷ

ՏՊԱՐԱՆ ՍՓԻՆՔՍ

1911

362.5

4-

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ


ԱՐԱՐԿԻՐԻ ՀԱՅՈՑ

Ի ԳԱՀԻՐԷ



Հիմնեալ 1 Յունիստ 1910

A
13835





ԳԵՂԱՄ ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԳԱՀԻՐԷ

ՏՊԱՐԱՆ ՍՓԻՆԻՔՍ

1911






ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՅՈՑ

Է ԳԱՀԻՐԷ

Հիմնեալ 1 Յունվար 1910



ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ. 1. Միութեանս նպատակը բացորոշապէս կրթական է. և իր ունեցած հասոյթով պիտի օժանդակէ Արաքիւրի Ուսումնարանին՝ ապահովելով անոր պիւտոճէին մէկ մասը կամ ամբողջութիւնը. յառաջիկային պիտի օժանդակէ նաև աղջկանց վարժարանին, իր ուժերուն ներած սահմանին մէջ:

ԿԵԴԻՐՈՆԱՏԵՂԻ

ՅՕԴ. 2. Միութեանս կեդրոնատեղին է Գահիրէ, ունենալով բաժանորդներ Եգիպտոսի ալլեալլ կողմերը. ինչպէս նաև Մասնաճիւղեր՝ արտասահմանի մէջ, ուր որ հայրենակիցներ կան: Մասնաճիւղերը իրենց գործառնութիւնները կը

կատարեն տեղւոյն պահանջած պայմաններով, բայց պարտաւոր են իրենց հասոյթը եռամսեայ առաքումներով տրամադրել կեդրոնին, ինչպէս և տարին անգամ մըն ալ հաշուեկշիռ մը ներկայացնել կեդր. Գործադիր Ժողովին՝ որուն միջոցաւ կըլլան բանակցութիւնք Արաբկիրի հետ:

Մասնաճիւղերը կրնան իրենց օգտակար դատած թելագրութիւններն ընել կեդրոնին:

ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 3. Միութիւնս կազմուած է Արաբկիրցի երկսեռ ազգայիններէ, այսու հանդերձ կ'ընդունուին տարբեր երկրացի ազգայիններու նուիրատուութիւններն ալ:

ՅՕԴ. 4. Միութեանս անգամ են ամեն անոնք, որ առնուազն մէկ բաժինի համար ամսական երկու դահեկան ողջ կը վճարեն:

ԲԱՐԵՐԱՐՔ

ՅՕԴ. 5. Բարերար կը հռչակուին անոնք որ 40 կամ աւելի ոսկւոյ գումար մը կը նուիրեն Միութեանս և կամ 50 բաժին կ'արձանագրուին, ու յաջորդաբար հինգ տարի կը շարունակեն: Իսկ 20 ոսկի միանուագ վճարողները պատուոյ անգամ կ'արձանագրուին:

ՀԱՍՈՅԹ

ՅՕԴ. 6. Միութեանս հասոյթի ազբիւրներն են՝

1. Ամսավճար՝ 2 դահ. ողջ իւրաքանչիւր բաժնի համար:

2. Նուիրատուութիւններ:

3. Վիճակահանութիւն, ներկայացումներ և այն ամեն ձեռնարկները՝ որ յարմար կը դատուին Գործադիր Ժողովէն: Այս կարգի ձեռնարկները Ազգ. Առաջնորդարանի կանխատու հաւանութեամբ կ'ըլլան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 7. Միութեանս Ընդհանուր Ժողովը կը բաղկանայ այն ամեն անդամակիցներէն, որոնք չափահաս են (այսինքն 18 տարին լրացուցած) և մէկ բաժնի համար 2 դահ. ամսավճարը կ'ընեն կանոնաւորապէս:

Ընկերուհիք ժողովներու չեն մասնակցիր. նոյնպէս չեն մասնակցիր անոնք, որ գումարման նախընթաց եռամսեայ անդամավճարները չեն ըրած. և անոնք՝ որ վերջին երկու ամսուան մէջ անդամակցած են:

ՅՕԴ. 8. Գործադիր Ժողովոյ հրատարակած էրբ անդամոց $1/3$ ը գրաւորապէս պահանջէ,

Ընդհ. Ժողովը կը գումարուի տարին անգամ մը, և ի հարկինս Անի՝ գաղտնի քուէարկութեամբ կընտրէ Գործադիր Ժողով մը որ կը բաղկանայ 9 անդամներէ: Գործադիր Ժողովը երբ տարի մը պաշտօնավարէ, տարւոյն լրման վիճակաւ կը դադրեցնէ իր անդամներուն 1/3 ը. երկրորդ տարին նոյնպէս, իսկ երրորդ տարին ամբողջութեամբ կը հրաժարի և Ընդհանուր Ժողովը նորընտրութիւն կը կատարէ: Դադարողը վերընտրելի են:

ՅՕԳ. 9. Ընդհանուր Ժողովը իւրաքանչիւր նիստի համար գաղտնի քուէարկութեամբ կը ընտրէ իր ատենապետն ու ատենադպիրը:

ՅՕԳ. 10. Ընդհ. Ժողովոյ նիստը օրինաւոր է երբ Ժողովոյ մասնակցելու իրաւունք ունեցող անդամոց 1/3 ը անձամբ ներկայ է նիստին: Անդամոց 1/3 ը ներկայ չեղած պարագային, երկրորդ անգամ ի նիստ կը գումարուի միևնոյն օրակարգով և նիստը օրինաւոր է երբ, Գործադիր Ժողովոյ անդամներէն զատ, առնուազն 10 անդամներ ներկայ ըլլան: Գրաւոր փոխանորդութիւններ անընդունելի են. իւրաքանչիւր անձ մէկ ձայն ունի, առանց ի նկատ առնելու իր վճարած բաժնի քանակը:

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 11. Գործադիր ժողովը՝ իր առաջին նիստին մէջ, գաղտնի քուէով իր մէջէն կընտրէ Ա. և Բ. ատենապետներ և Ա. և Բ. ատենադպիրներ. գանձապետ մը և հաշուակալ մը. եթէ Գործադիր ժողովոյ անդամներէն հրաժարողներ գտնուին, անոնց տեղ կը յաջորդեն համեմատականի շարքին մէջ գտնուողները և առաւելագոյն քուէ անողները:

ՅՕԵ. 12. Գործադիր ժողովը, իր պաշտօնավարութեան Ա. տարին լրանալուն, անդամներէն Յը վիճակաւ կը դադրեցնէ և կը հաջորդէ Ընդհ. ժողովոյ՝ որ կ'ընտրէ անոնց յաջորդները. երկրորդ տարին նոյնպէս, իսկ երրորդ տարին ամբողջովին կը դադրի պաշտօնէն (Տես Յօդ. 8):

ՅՕԶ. 13. Գործադիր ժողովոյ պարտականութիւնն է հետամուտ ըլլալ Միութեան շահերուն, և ամեն կարելի միջոցներով աշխատել անոր յառաջդիմութեանն ու յարատեւութեանը, միշտ յարգելով Կանոնագրի տրամադրութիւնները:

ՅՕԴ. 14. Գործադիր ժողովը պարտաւոր է անհրաժեշտաբար 15 օրն անգամ մը ժողովի գումարել, և իր որոշումները արձանագրել ա-

ատենագրութեան տուճարին մէջ։ Որոշումները վաւերական են երբ անդամներէն հինգը ներկայ կը գտնուին ժողովին։ Գործադիր ժողովը իրաւունք ունի օգտակար շեղող իր ու է ընկերը հրաժարեցնել մեծամասնութեան քուէով։

ՅՕԴ. 15. Գործադիր ժողովը համարատու ըլլալով Ընդհանուր ժողովին, ամեն տարեգլխի հաշուեկշիռ մը կը պատրաստէ և կը ներկայացնէ անոր վաւերացումէն վերջ. դարձեալ քննութեան և վաւերացման համար օրինակ մը կը ղրկուի Ազգ. Առաջնորդարանի, որմէ վաւերացուած է ներկայ Կանոնագիրս. մէկ մէկ օրինակ ևս Մասնաճիւղերուն, և օրինակ մ'ալ Մամուլին կը ղրկուի ի հրատարակութիւն։

ՅՕԴ. 16. Գործադիր ժողովոյ ատենապետին քով կը մնան մայր տուճարը և կնիքը, ատենագրիրին քով՝ ատենագրութեան և ընդօրինակութեան տուճարները. Գանձապետին քով՝ օրատետրն ու սնտուկի տուճարները, որոնք պէտք է թուագրուած ըլլան։

ՅՕԴ. 17. Բոլոր գանձումները պէտք է կատարուին Ատենապետին և Գանձապետին ստորագրութեամբ և Միութեան կնիքը կրող արմատաւոր ընկալագրերով։ Գանձումները կը կատարուին ուղղակի Գործադիր ժողովոյ անդամներու

միջոցաւ և կը յանձնուին Գանձապետին. զանձումներու քանակը տասն ոսկի ամբողջ անալուն՝ ի պահ կը դրուի Գրէտի Լիսնէի դրամատան մէջ, յանուն Միութեանս: Գործադիր Ժողովոյ անդամք համերաչխարար պատասխանատու են:

ՅՕԳ. 18. Վճարումները կը կատարուին Գործադիր Ժողովոյ որոշմամբ և վաւերական ընկալագրերով. որոնք կը թուագրուին և օրը օրին կ'արձանագրուին տուժարին մէջ:

ՅՕԳ. 19. Գործադիր Ժողովը, եթէ զանազան պատճառներով իր մեծամասնութիւնը կորսընցնէ, լուծեալ կը նկատուի: Մնացեալ անդամք պարտին ամբողջապէս Ընդհ. Ժողով գումարել նոր ընտրութեան համար:

ՊԱՅՄԱՆՔ

ՅՕԳ. 20. Միութիւնս իր գոյութիւնը և յարատեւութիւնը ապահովելու համար՝ գոյացած հասոյթին 20 0/0ը վար կը դնէ և այս պահեստի գումարով կը գնէ արժէքաւոր պարգեատու պարտատուներ և զանոնք կը պահէ Գրէտի Լիսնէի դրամատան մէջ Միութեան անունով:

ՅՕԳ. 21. Դրամատան հետ եղած գործողութիւնք պէտք է որ կատարուին Միութեան

անուշով և անօր կնիքին հետ կրեն Ատենապետին և Գանձապետին ստորագրութիւնները:

ՅՕԴ. 22. Թուականէս երկու տարի վերջը միայն ընդհ. Ժողովը իրաւունք կունենայ պահետի գումարը պակսեցնել կամ աւելցնել և այդ գումարին հիմնաւոր նպատակը որոշել:

ՅՕԴ. 23. Միութիւնը վճարեալ պաշտօնեայ ունենալու չէ:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 24. Միութիւնս Արաբկիրի Ուսումնարանին տարեկան պիտօճէն իր ձեռքը ունենալէ վերջ, և տեղեկանալով Մասնաճիւղերէն ակընկալուած հասոյթի գումարին, կորոչէ իր մասնակցութեան բաժինը, նաև կանուանէ Արաբկիրի մէջ, իբրև ներկայացուցիչ, երկու ծանօթ անձնաւորութիւններ, որոնք պարբերաբար և առառաւելն վեց ամիսն անգամ մը վարժարանին ուսումնական վիճակին և մատակարարութեան վրայ՝ յետ քննութեան՝ ճշգրիտ տեղեկութիւններ կուտան, և կամ համաձայնելով Միացեալ Ընկերութեան հետ, Միութիւնս ուղղակի անօր խնամքին կը յանձնէ Ուսումնարանը:

ԼՈՒԾՈՒՄ

ՅՕԴ. 25. Միութիւնը լուծեալ կը նկատուի երբ անդամներէն միայն տասը հոգի կը մնայ:

ՅՕԴ. 26. Միութիւնը շուծուած պարագային, իր արժեթղթերը և գոյքերը հնչուն գրամի վերածելով՝ տեղւոյս Առաջնորդարանի միջոցաւ կը զրկէ Արարկիրի Առաջնորդարանին՝ ուղղակի իր նպատակին ծառայեցնելու համար, իսկ տամարները և թուղթերը կը յանձնուին Գահիրէի Առաջնորդարանին ի պահ:

ՅԱՐԵԼՈՒԱԾ

Ներկայ կանոնագիրը վերաքննելի է երկու տարի վերջ. նպատակը մնալով միշտ անփոփոխ:

Գահիրէ, 10 Մայիս (Ն.Տ.) 1911.

Թիւ 632

Հաստատուած Ազգ. Գաւառ. Վարչութեան Պատ. Բաղաքական Ժողովոյ 1911 Օգոստոս 4 ի (Ն.Տ.) նիստի մէջ:

Գահիրէ. 10 Օգոստոս (Ն.Տ.) 1911

Առաջն. փոխանորդ Հայոց Գահիրէի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶՆՅ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՏԱՆ ՄԷՋ

Այս խիստ անձուկ էջերուն մէջ երկարօրէն գրելու գիւրութիւնը չունինք սիրելի հայրենակից, և արդէն մեր ներկայ ձեռնարկին մասին նոր բաներ մ'ըսելու պէտքը չենք տեսներ:

Պարզապէս ընտանեկան կաղամակերպութիւն մըն է այս, որ ինչպէս գիտէք՝ ծաղում առաւ ասկէ գրեթէ մէկ ու կէս տարի առաջ երբ մեր խեղճ Արարկիրը՝ ամբողջ քառօրդ դար մը Համբատեան արիւնաքամ բէժիմին ներքեւ հալումաշ ըլլալէն յետոյ, սովի անողորմ հարուածներուն տակ մահացու կերպով կը տապալակէր: Մեր սովամահ եղբայրներուն աղեխարշ աղերսը կը հասնէր մեր ականջին, և մենք չէինք կրնար անտարբեր մնալ, հաց եւ վարժարան ուղեցին մենէ եւ մենք խեղճուկրակ հանգանակութիւնով մը պատասխանեցինք ու, քիչ վերջ, մեր այսօրուան ԿՐԹԱՍԻՐԱՅ ովը՝ ուրախ ենք ըսել:

Յոխորտալու բնաւ իրաւունք չունինք, կղզանք թէ մեծ բաներ մ'ըրած չենք որովհետեւ միջավայրը ուր պիտի գործէինք՝ խիստ սահմանափակ էր, (տես Յօդ. 3) ու՛ մեր ձեռնարկը շարք մը խոչնդոտներով չըջապատուած, որուն մէկ տխուր հետեւանքն է մեր կանոնագրին վաւերացման յապաղումը:

Եթէ, սակայն, նիւթապէս չը կրցինք ընել ինչ որ բնականաբար կը սիրենք ընել, գէթ բարոյապէս մեր համեստ ձեռնարկը իր շօշափելի դւ փայլուն

արդիւնքները ունեցաւ : Արարկիւր մեզ՝ ով խանդավառուեցաւ. Ամերիկայի մեր քոյր Ուսումնասիրացները նոր կենդանութիւն մը կ'ստանային. ու Պոլիս, աչգ հարազատ կեդրոնին մէջ, Կրթանիւրաց մը գոյութիւն կ'առնէր :

Սրտապնդող երեւոյթներ չե՞ն միթէ ասոնք սիրելի հայրենակից :

Ու մեզի կը մնայ այլեւս դորձը շարունակել՝ առանց ընկրկելու անխուսափելի խոչնդատներուն առջեւ :

Շատ բնական է որ այս կարգի ձեռարկներ մեծ զոհողութիւններ կը պահանջեն. ու մեր տանը մէջ, մեր այս ընտանեկան կազմակերպութեան սեղանին շուրջն է որ՝ աւելի մօտէն՝ առիթ պիտի ունենանք մեր քաղաքացիական նկարագիրը ուսումնասիրելու, պիտի հպարտ զգանք ինքզինքնիս մեր գիտակցութեամբը եւ կամ պիտի դառնանալով դառնանանք՝ մեր թերութիւններուն ի տես, եւ ամեն անգամ որ խորթացած, անզգայ արարածներու հանդիպելու դժբաղդութիւնը ունենանք :

Ան որ իր բնտանիքին ներքին ցաւերը չի տեսներ՝ ի՞նչ կուզէք որ այնպիսին զգայ ստարին հանդէպ :

« La charité bien ordonnée commence par soi-même » կրտէ ֆրանսական առածը :



ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱՑՈՒՑԱԿ

Պատուակաշ նախագահուրքեանր

ԱԶՆ ՊԵՏՐՈՍ ԷԾԷՆՏԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

Աբրահամ Սարգիսեան	Գուրգէն Միրիճանեան
Աշոտ Բրուտեան	Երուանդ »
Առաքել Պէրպէրեան	Զաքար Տէօվլէթեան
» Վարդանեան	Թովմաս Բրուտեան
» Գարագաշեան	Խաչատուր Շահրոզեան
Աստուր Բրուտեան	» Չօբճեան
Արմենակ Գմգմեան	Խաչիկ Բէչօեան
» Պետեւեան	Կարապետ Բարունակեան
Արտաշէս Գարագաշեան	» Գալբաքեան
» Թիւրապեան	» Գմգմեան
Արշակ Կարապետեան	» Տէր Աղամեան
Ատոմ Պէրպէրեան	» Մեսրոպեան
Աւետիս Կոկիկեան	» Երզնկացեան
» Իւրակ իւլեան	» Վարդանեան
» Սարգիսեան	Հրանդ Սօպանեան
Գարեգին Պահլաւ	Ղեւոնդ Եկաւեան
Գէորգ Եկաւեան	Մարտիրոս Թէրզեան
» Մեսրոպեան	Մինաս Պալլիկեան
» Թէրզիպաշեան	Մինրան Հապէշեան
» Պէրպէրեան	Միսաք Արիստեան
Գրիգոր Գմգմեան	Մկրտիչ Եզիկեան
» Գարբինեան	» Թէվէքէլեան
» Միրանեան	Մովսէս Շամլեան

Մովսէս Ֆէրէշէթեան	Սարգիս Զուրիկեան
Յակոբիկ Աղազարմեան	» Էժտահարեան
Յակոբ Սարգիսեան	» Պէզիրկանեան
» Սուվայեան	» Եփրանոսեան
Յարութիւն Ճանճիկեան	Սեդրոք Օտապաշեան
Յովհաննէս Դմզմեան	Սարգիս »
» Ճանիկեան	Սուրէն Քիւրքճեան
» Զողացպանեան	Վահրամ Տէմիրճեան
» Քիւրքճեան	Տիգրան Գ. Պահլաւ
Նազարէթ Աղազարմեան	Փիլիպպոս Պալուճի
» Վարդանեան	» Հապէշեան
Նշան Բրուտեան	» Պողարճեան
Սարգիս Երամեան	

ԱՆԴԱՄՈՒՀԻՔ

Տրկին	Ազնիւ Ղ. Եկաւեան
»	Աղաւնի Ս. Օտապաշեան
»	Անթառամ Շամլեան
»	Աննա Թիւրպեան
»	Աշխէն Մ. Թէվէթէլեան
»	Արեգնազ Գ. Պէրպէրեան
»	Էօթէնի Յ. Քիւրքճեան
»	Թագունի Գ. Միրանեան
»	Թիւրֆէնաէ Փ. Հապէշեան
»	Իսկունի Յ. Ճանիկեան
»	Հաճիկիւլ Ղ. Տէօվլէթեան
»	Հայկանոյ Փ. Պալուճի
»	Հայկանոյ Գ. Մեսրոպեան
»	Հաճի Մարան Բրուտեան.
»	Մառի Ա. Պէրպէրեան

Օրրորդ Զապէլ Պէրպէրեան

- Տրկիրն Մատի Ս. Երամեան
» Մատի Գ. Պաշլու
» Մատի Կ. Վարդանեան
» Մարիցա Ա. Սարգիսեան
» Նեկտար Յ. Չաղապանեան
» Ուստիանէ Վարդանեան
Սէյաէ Ս. Զուրիկեան
Սոֆիա Ս. Եփրանոսեան
Պիւլպիւլ Յ. Գմգմեան
Փարեզ Բրուտեան
Փեփրոն Կ. Գմգմեան
Օրբորգ Սաթենիկ Հապէշեան

ԾԱՆՈԹ. — Այս ցուցակներու մէջ նշանակուած
չեն անոնք որ նոր արձանագրուած են եւ անոնք որ
կանոնաւոր վճարում ըրած չեն:

ՆՈՒՐԱՏՈՒՌԻԹ ԻՒՆՆԵՐ

Միութիւնս՝ ժահուան, հարսանիքի եւ այլևայլ պարագաներու տակ հեանեալ նուիրատուութիւնները ստացած է:

Տեալք՝	Դահ. Ողջ
Քիւրքճեան Եղբարք (Օմտուրման)	500
Առաքել Մ. Պէրպէրեան	250
Պետրոս Գօլանճեան (Խարթուժ)	100
Ջուրի Ընկ. պաշտօնեաներէն	100
Բարեսէր Տիկին Վը	97. 50
Գրիգոր Եազուպեան	97. 50
» » (Իզմիրլեան պատկերի մը փոխարէն)	97. 50
Աբրահամ Եազուպեան	97. 50
Փրիկպոս Մելիքեան	80
Սահիան Յովհաննէսեան (Մինիա)	77. 50
Տէր Միքայէլեան Եղբարք	50
Բիզանդ Մարաք	52. 50
Գէորգ Մարլեան	50
Հրանտ Բէշիշեան	50
Յովհաննէս Ճանիկեան	40
Կարապետ Վարդանեան	20
Կարապետ Գմբեան	20
Պետրոս Գմբեան (Պէյրութ)	17
Գրիգոր Աղանեան	17
Պողոս Փափազեան	17
Վահան Փափազեան (տարեվճար)	24
Աթանաշ Յլօրի	24

A 13895



ԳԵՂԱՍ ՏԵՐ ԿՐԳՈՒԹԵԱՆ

ՈՐԲԱՍԻՐԱՅՁ

Տեղւոյս Արաբկիրի Որբասիրաց ընկերութիւնը շատոնց ի վեր կազմալուծուած էր արդէն: Հետեւաբար՝ իր ունեցած պահեստի գրամագլուխը ընդամենը 412 ոսկի.. այլեւայլ առիթներով Արաբկիր զբնդուած է: Այս գումարէն 40 ոսկի գործածուած է որբախնամ պէտքերու. իսկ մնացեալ գումարը պիտի գործածուի Արաբկիրի շուկային մէջ. ազգապատկան դեանի մը վրայ, պանդոկ-վաճառանոցի մը շինութեան, որուն արտադրած հասոյթը պիտի յատկացուի տեղւոյն կրթական գործին:

Այս առթիւ սրտանց կը գնահատենք մեր Պատ. հայրենակից Առաքել էֆ Պէրպէրեանի ունեցած ասք վերաբերումը. կազմալուծեալ Որբասիրաց ին մէջ. որուն բարեբախտաբար կը յաջորդէ այսօրուան կըրբասիրացը.

ՎՐԻՊԱԿ


Անդամներու ցանկին պէտք է աւելցնել.


Տ. Մինաս Պէրպէտեան.

Նախրատուութեան ցանկին մէջ կարդալ.

Զուրի Ընկ.' պաշտօնեայններէն Չրդ. անգամ .	100	Դանկեան
Տիար Ռուբէն Տէվէճեան	20	»
» Յակոբ Նազարեան	24	»
» Վահան Փափաղեան . . (փոխան 24ի)	48	»

	Սխալ	Ուզիդ
Էջ 13 սող 4րդ	հարազատ	հայաչատ
Էջ 9 Յօդուած 19	ամբողջապէս	անմիջապէս
Էջ 15 սող 39		Հայկանուշ Գ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0012354

ЦЕНА

11
13835

Бу

1999

Ч. р. 600